

**«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ
Մենեջմենթ Արմենիա»**

**Սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության**

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

*2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	4
Ծանոթագրություն	5

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

*«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
Տնօրենների խորհրդին*

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2013թ. նոյեմբերի 29-ից 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք քաղված են «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: Մեր՝ ապրիլի 30-ին թողարկված եզրակացության մեջ մենք արտահայտել ենք դրական կարծիք այն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որոնցից քաղվել են կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները (տես ներքևում): Բացի այդ, մեր եզրակացությունը ներառում է ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ուշադրություն պահանջող պարբերություն այն մասին, որ առկա է անորոշություն Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի բարեփոխումների վերաբերյալ, որից ստացվելիք եկամուտը ներկայացնում է Ընկերության ապագա եկամուտների հիմնական աղբյուրը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կողմից պահանջվող Ընկերության՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների բոլոր բացահայտումները: Այդ իսկ պատճառով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ուղղությամբ աշխատանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ԱՄՍ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի արտահայտումը:

Կարծիք

Մեր կարծիքով, 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններին: Այնուամենայնիվ, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պարունակում են ուշադրություն պահանջող հարցեր այնքանով, որքանով 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Հատուկ ուշադրություն պահանջող հարցեր

Առանց փոխելու մեր կարծիքը, մենք ուշադրություն ենք հրավիրում սույն ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 2-ին, որտեղ նկարագրված է անորոշությունը Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի բարեփոխումների վերաբերյալ, որից ստացվելիք եկամուտը ներկայացնում է Ընկերության ապագա եկամուտների հիմնական աղբյուրը: Այս պայմանները, ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 2-ում նշված այլ հանգամանքների հետ միասին վկայում են էական անորոշության առկայության մասին, որը կարող են կասկածի տակ դնել Ընկերության անընդհատ գործելու կարողությունը:

«Էրնսթ և Յանգ» ՓԲԸ
30 ապրիլի 2014թ.

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Գլխավոր տնօրեն՝ Ն. Սարգսյան՝ ի դեմս
լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2013թ.-ի

հուլիսի 31-ին տրված լիազորագրի հիման վրա)



Սերգեյ Տասկան

Էրիկ Հայրապետյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն
2013 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

(հազար ՀՀ դրամ)

	29 նոյեմբերի 2013թ. — 31 դեկտեմբերի 2013թ.
Տոկոսային եկամուտ	1,555
Կոմիսիոն ծախսեր	(10)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ վնաս	(338)
Վարչական ծախսեր	(14,121)
Այլ գործառնական ծախսեր	(16,397)
Վնաս մինչև շահութահարկ	(29,311)
Շահութահարկի գծով օգուտ	560
Հաշվետու ժամանակաշրջանի վնաս	(28,751)
Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ եկամուտ	—
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ վնաս	(28,751)

Գլխավոր գործադիր տնօրեն



Արման Վարդանյան

Գլխավոր հաշվապահ



Օֆելյա Աղաքարյան

30 ապրիլի 2014



Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	31 դեկտեմբերի 2013թ.
Ակտիվներ	
Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հետաձգված հարկային ակտիվներ	560
	560
Ընթացիկ ակտիվներ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	636,495
Այլ ակտիվներ	2,210
	638,705
	639,265
Ընդամենը ակտիվներ	
Սեփական կապիտալ և պարտավորություններ	
Սեփական կապիտալ	
Կանոնադրական կապիտալ	650,000
Կուտակված վնաս	(28,751)
	621,249
Ընդամենը սեփական կապիտալ	
Պարտավորություններ	
Մասնագիտական ծառայությունների գծով պարտավորություններ	2,800
Այլ պարտավորություններ	15,216
	18,016
Ընդամենը պարտավորություններ	
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	639,265

**Մեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն
2013 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար**

(հազար ՀՀ դրամ)

	<i>Կանոնադրական կապիտալ</i>	<i>Կուտակված վնաս</i>	<i>Հնդամներ սեփական կապիտալ</i>
29 նոյեմբերի 2013թ.	–	–	–
Կանոնադրական կապիտալի թողարկում	650,000	–	650,000
Այլ համապարփակ վնաս	–	(28,751)	(28,751)
31 դեկտեմբերի 2013թ.	650,000	(28,751)	621,249

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն
2013 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

(հազար ՀՀ դրամ)

	29 նոյեմբերի 2013թ. – 31 դեկտեմբերի 2013թ.
Գործառնական գործունեություն	
Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդին միանվագ երաշխիքային վճար	(15,000)
Այլ վճարներ	(60)
Զուտ դրամական միջոցների հոսքեր` օգտագործված գործառնական գործունեությունում	(15,060)
Ֆինանսավորման գործունեություն	
Կանոնադրական կապիտալում բաժնետերերի ներդրումներից մուտքեր	650,000
Զուտ դրամական միջոցների հոսքեր` ստացված ֆինանսավորման գործունեությունից	650,000
Ներդրումային գործունեություն	
Ստացված տոկոսներ	1,555
Զուտ դրամական միջոցների հոսքեր` ստացված ներդրումային գործունեությունից	1,555
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	636,495
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	–
Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդներ ժամանակաշրջանի սկզբում	–
Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդներ ժամանակաշրջանի վերջում	636,495

Ծանոթագրություն

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Ուղեկցող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք բաղկացած են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունից, 2013թ. նոյեմբերի 29-ից 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունից և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունից, ստացվում են Ընկերության աուդիտի ենթարկված և 2014թ. ապրիլի 30-ին ստորագրված ֆինանսական հաշվետվություններից 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: